ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

27 մայիսի 2020 թվականի թիվ 42-Ա
ք. Երևան

«ՄԱՅ ՆԵՏ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈՉ ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԵՐ ՎԵՐԱՀԵՌԱՐՁԱԿԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի և 52-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ՄԱՅ ՆԵՏ» ՍՊ ընկերության ոչ սեփական հեռուստածրագրեր վերահեռարձակելու թույլտվություն ստանալու մասին 2020 թվականի մայիսի 18-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց.***

1. Բավարարել «ՄԱՅ ՆԵՏ» ՍՊ ընկերության դիմումը և տալ ոչ սեփական հեռուստածրագրեր վերահեռարձակելու թույլտվություն՝ հեռուստածրագրերի վերահեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի գործողության ժամկետով՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

2020թ. մայիսի 27
ք. Երևան

Հավելված
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի
2020 թվականի մայիսի 27-ի թիվ 42-Ա որոշման

Հեռուստածրագրի անվանումը	**Թույլտվության ժամկետի ավարտը**
«Պերվիյ կանալ: Վսեմիրնայա սետ» «Կարուսել Ինթերնեյշնլ» «Էյչ Դի Լայֆ»	31.12.2020թ.
«Մատչ! Պլանետա» «Կինոխիտ» «Կինոսվիդանիե» «Կինոսեմյա» «Մուժսկոյե Կինո» «Կինոմիկս»	31.12.2020թ.
«Մ1 Գլոբալ» «Բոկս ՏՎ» «Ինդիյսկոյե Կինո» «Կուխնյա ՏՎ» «Ավտո Պլյուս» «Զի ՏՎ» «ՏՆՏ Մյուզիք»	31.12.2020թ.